



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/07

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8505-17 գրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 02.05.2017թ. թիվ 333 գրության հիման վրա, 17.05.2017թ. թիվ 03/73-3/8505-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Կարենօիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Կարենօիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կարենօիլ» ՍՊԸ-ն 18.05.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հանդիսանում է պարտաճանաչ հարկ վճարող: Սույն թվականի մարտի 22-ին ընկերությունը մասնակցել է «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/6-07/17» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, համաձայն արձանագրության, Ընկերությունն ունեցել է հարկային պարտավորություն: Սակայն Ընկերության կողմից պարտավորությունը կատարվել է նույն օրը, մինչդեռ բանկային փոխանցման հաստատումը կատարվել է հաջորդ աշխատանքային օրը: Այդ իսկ պատճառով Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրվել է ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը:

Ընկերությունը Խորհրդին խնդրել է հաշվի առնել վերոհիշյալ հանգամանքները, Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և տալ հնարավորություն մասնակցելու հետագա գնման գործընթացներին:

Ընկերությունը կից ներկայացրել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի Էրեբունի մ/6-ի 22.03.2017թ. թիվ 170322047124041 վճարման հանձնարարագիրը, համաձայն որի Ընկերության կողմից շահութահարկի գծով 22.03.2017թ. կատարվել է 185 000 ՀՀ դրամ վճարում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.05.2017թ. թիվ 333 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, 12.04.2017թ. հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊԶԲ 15/6-07/17» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Կարենօիլ» ՍՊԸ-ի վերաբերյալ: 14.02.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 184 984 ՀՀ դրամի պարտավորություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/07 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/07 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

* 1. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի, մարտկոցների, բենզինային շարժիչի յուղերի, հակասառնեցուցիչ հեղուկի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊԶԲ 15/6-07/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/6-07/17» ծածկագրով ընթացակարգի գրանցամատյանի համաձայն՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 21.03.2017թ., իսկ 22.03.2017թ. հայտում կատարել է փոփոխություն:

3. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 24.03.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կարենօիլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.03.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **21.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 184 709 ՀՀ դրամի չափով:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

7. Ընկերությունը Խորհրդին ներկայացրել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի էրեբունի մ/ճ-ի 22.03.2017թ. թիվ 170322047124041 վճարման հանձնարարագիրը, համաձայն որի Ընկերության կողմից շահութահարկի գծով 22.03.2017թ. կատարվել է 185 000 ՀՀ դրամ փոխանցում:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8505-17 գրությունը, «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 02.05.2017թ. թիվ 333 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

2. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

3. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում մասնակիցը, մինչև հայտերը բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Կարենօիլ» ՍՊԸ-ն «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՐԶԷԿ-ՇՀԱՊԶԲ 15/6-07/17» ծածկագրով ընթացակարգին **21.03.2017թ.** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 24.03.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կարենօիլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.03.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **21.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 184 709 ՀՀ դրամի չափով:**

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված 22.03.2017թ. թիվ 170322047124041 վճարման հանձնարարագրին, որի համաձայն Ընկերության կողմից շահութահարկի գծով 22.03.2017թ. կատարվել է 185 000 ՀՀ դրամ փոխանցում, ապա Խորհուրդը հայտնում է, որ «ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/6-07/17» ծածկագրով ընթացակարգի գրանցամատյանի համաձայն՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտը ներկայացրել է **21.03.2017թ., իսկ 22.03.2017թ. հայտում կատարել է փոփոխություն**, հետևաբար տվյալ դեպքում ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը դիտարկվում է հայտը ներկայացնելու օրվա՝ **21.03.2017թ. դրությամբ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Կարենօիլ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն «Կարենօիլ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 21.03.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8505-17 գրությամբ ներկայացված

«Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2017թ. թիվ 03/73-3/8505-17 գրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04720098) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ